

ՀՏԴ 57/591.2)

Կենսաբանություն

Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ, կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն

e-mail: hayk.s.mdd@gmail.com

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՆԱՄԿՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԻ (MYOXIDAE) ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԱԲՈՒՅԾՆԵՐԸ

Քնամկների ընտանիքը (Myoxidae) կրծողների կարգի (Rodentia) ամենաքիչ ուսումնասիրված խմբերից մեկն է ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում, այլ նաև ամբողջ աշխարհում: Քնամկների ընտանիքի էկոլոգիայի, էթոլոգիայի, տարածվածության, կենսաբանական առանձնահատկությունների, սաղմնային և հետսաղմնային զարգացման վերաբերյալ տեղեկությունները չափազանց սահմանափակ են, չկան նաև հստակեցված տվյալներ նրանց ներքին և արտաքին մակաբույծների մասին: Տվյալների նման աղբատությունը պայմանավորված է նախևառաջ քնամկների համեմատաբար քիչ քանակությամբ, թաքնված կենսակերպով և կենսագործունեության առանձնահատկությամբ: Քնամկների ընտանիքի մակաբուծաֆաունայի ուսումնասիրությունը կօգնի ավելի ամբողջական պատկերացնել այս կենդանիների դերը ինչպես ընդհանուր բնական էկոհամակարգում, այնպես էլ մարդու առողջության համար:

Բանալի բառեր քնամկների ընտանիք (Myoxidae), մակաբույծներ, հելմինթներ, հարուցիչներ, էկոլոգիա, կրծող, կաթնասուն, ֆաունա, կենսամիջավայր, տրեմատոդ, նեմատոդ, ցեստոդ

A. Саргсян

ВНУТРЕННИЕ И ВНЕШНИЕ ПАРАЗИТЫ СЕМЕЙСТВА СОНЕВЫХ (MYOXIDAE) АРМЕНИИ

Семейство соневых (Myoxidae) – наименее исследованная группа среди отряда грызунов (Rodentia) как в Республике Армения, так и во всем мире. Сведения относительно экологии, этологии, биологических особенностей, эмбрионального и постэмбрионального развития семейства соневых чрезвычайно ограничены, нет также точных данных об их внутренних и внешних паразитах. Подобная скудность данных обусловлена прежде всего сравнительно малым количеством соневых, их скрытым образом жизни и особенностью жизнедеятельности. Изучение паразитофауны семейства соневых поможет более целостно представить роль этих животных как в общей естественной экосистеме, так и для здоровья человека.

Ключевые слова: семейство соневых (Myoxidae), паразиты, гельминты, возбудители, экология, грызун, млекопитающее, фауна, среда обитания, трематоды, нематоды, цестоды

H. Sargsyan

***INTENAL AND EXTERNAL PARASITES OF THE ARMENIAN
DORMOUSE FAMILIE (MYOXIDAE)***

The family of dormouse (Myoxidae) is the least studied group among the rodent group (Rodentia), as in the Republic of Armenia and throughout the world.

The features of their ecology, ethology, embryonic and postembryonic development remain poorly lit, there are no clarified data on their internal and external parasites too. Such poverty of the information is primarily conditioned by the number of dormouse and their features of life.

Study of family of dormouse (Myoxidae) can help us more fully understand the role of these animals both in the natural ecosystem and for human health.

Keywords: dormouse (Myoxidae), parasites, helminths, causative agents, ecology, rodent, mammals, fauna, habitat, trematodes, nematodes, cestodes:

1954 թ-ին Դավր Հայաստանի կաթնասունների ֆաունայի համար ներկայացրել է 2 տեսակի քնամուկ՝ մեծ քնամուկ (*Glis glis*) և անտառային քնամուկ (*Dryomys nitedula*) [4]: Հետագայում մեր գիտական խումբը պրոֆեսոր Է. Գ. Յավրույանի ղեկավարությամբ նկարագրել է 3-րդ՝ Հայաստանի ֆաունայում մինչ այդ չնկարագրված տեսակը՝ այգու քնամուկը (*Eliomys quercinus*):

Քնամկների ընտանիքի ներկայացուցիչների մասին տեղեկատվության այդ աստիճան աղքատությունը պայմանավորված է նրանց գիշերային կենսակերպով, իսկ երբեմն էլ դժվարամատչելի վայրերում բնադրմամբ: Քնամկների ընտանիքի (*Myoxidae*) ներկայացուցիչներն առհասարակ գիշերային կենդանիներ են, որոնք հիմնականում բույն են կառուցում ծառերի ճյուղերի վրա, կամ ապրում են ծառերի փչակներում, ժայռերի ճեղքերում: Մյուս առանձնահատկությունը կայանում է նրանում, որ նրանք ձմեռային քուն են մտնում: Հաշվի առնելով այս և մի շարք այլ հանգամանքներ հասկանալի է դառնում քնամկների ընտանիքի մասին տեղեկատվության նմանատիպ աղքատությունը:

Նման պայմաններում հասկանալի է, որ շատ չեն տեղեկությունները նաև քնամկների ընտանիքի արտաքին և առավել ևս ներքին մակաբույծների մասին: Հայտնի է, որ քնամկներն աչքի չեն զառնվում հարուստ ներքին մակաբույծների տեսակային բազմազանությամբ և այդ մակաբույծներից շատ քչերն են յուրահատուկ այս կամ այն տեսակի քնամկան համար: Մնացածներն էլ ընդհանուր են ուրիշ կրծողների և մանր կաթնասունների համար: Քնամկների ընտանիքի ներկայացուցիչների ներքին մակաբույծներից են նեմատոդները, ցեստոդները և տրեմատոդները, բայց կան նաև տեղեկություններ քնամկների ընտանիքի ներկայացուցիչների արյան մակաբույծներով վարակված լինելու մասին [6]:

Մեր կողմից Հայաստանում կատարված դիտարկման արդյունքները ցույց են տվել, որ մեծ քնամկների (*Glis glis*) 70 %-ը՝ վարակված են *Heligmosomoides gracile*, իսկ 10%-ը՝ *Longistriata elpatievskii* նեմատոդներով: Ավելի բարձր ցուցանիշներ են անտառային քնամկների (*Dryomys nitedula*) մոտ: Պարզվել է որ նրանց գրեթե 90%-ը վարակված են մակաբույծ որդերով, որոնցից 55,5%-ը՝ նեմատոդներ, 44,4%-ը՝ ցեստոդներ, 39,3%-ը՝ տրեմատոդներ [2,3,5,7]:

Ինչպես հայտնի է, վերոնշյալ մակաբույծ որդերը հանդիսանում են ճիճվային ինվազիայի հարուցիչներ: Հելմինթոզներից ամենատարածվածներն են տրեմատոդներն, ցեստոդները և նեմատոդները:

Մեր հետազոտությունների ընթացքում առանձնյակների արտաքին զննման ժամանակ պարզվեց, որ քնամկների ընտանիքի ներկայացուցիչները բավականին հարուստ են նաև արտաքին մակաբույծներով: Արտաքին մակաբույծներից քնամկների ընտանիքի ներկայացուցիչների մոտ հայտնաբերվել են ոչիլներ, լվեր և տզեր: Հատկանշական է, որ մեր դիտարկումների ժամանակ հայտնաբերված արտաքին մակաբույծները հիմնականում նույնն էին բոլոր տեսակների մոտ և այդ նույն մակաբույծները յուրահատուկ են նաև կրծողների կարգի այլ ներկայացուցիչների համար: Բայց հայտնի են նաև քնամկների ընտանիքին բնորոշ արտաքին մակաբույծներ, ինչպիսք են, օրինակ, լվերից *Ceratophyllus sciurorum* [8]: Արտաքին մակաբույծները ոչ միայն անմիջական վնաս են հասցնում կրծողների կարգի (*Rodenita*) մեզ հետաքրքրող ընտանիքի ներկայացուցիչներին, այլ նաև հանդիսանում են զանազան հիվանդությունների փոխադրողներ և հարուցիչներ:

Ինչպես արդեն նշվել էր մեր նախորդ հոդվածներում մարդու բնության հանդեպ կործանարար վերաբերմունքի հետևանքով, որը դրսևորվում է անկանոն անտառահատումներով, մասնավորապես խոշոր փչակավոր ծառերի վերացմամբ, այսինքն քնամկների ընտանիքի բնական կենսամիջավայրի վերացմամբ, ի հայտ են գալիս այս կրծողների սինանթրոպ պոպուլյացիաներ [1], ինչի հետևանքով այս կենդանիները իրենց հետ մարդկանց կացարան են բերում նոր տեսակի արտաքին և ներքին մակաբույծներ:

Ի մի բերելով կատարված աշխատանքները հանգում ենք այն եզրակացությանը, որ քնամկների ընտանիքի ներկայացուցիչները, վարակված լինելով տարբեր արտաքին և ներքին մակաբույծներով, ակամա հանդես են գալիս որպես տարբեր հիվանդությունների տարածողներ: Ուստի հաշվի առնելով նաև քնամկների ընտանիքի բնակեցման նպաստավոր պայմանների անընդհատ կրճատման արդյունքում նորանոր սինանթրոպ պոպուլյացիաների ի հայտ գալը, մենք գտնում ենք, որ քնամկների ընտանիքի մակաբուծաֆաունան ավելի խորը ուսումնասիրությունը ունի ոչ միայն կարևոր գիտական, այլ նաև գործնական մեծ նշանակություն՝ նշված հիվանդությունների կանխարգելման տեսանկյունից:

Գրականություն

1. Սարգսյան Հ. Մ., Պապյան Լ. Հ., Յավրույան Է. Գ. Հայաստանի քնամկների ֆաունան, տարածվածությունը և սինանթրոպ առանձնյակները. Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր. Բնական գիտություններ, №1, Ստեփանակերտ, 2017, էջ 116-117
2. Аветисян Г.А.. Обзор фауны блох Армянской ССР. Фауна и экология вредных беспозвоночных животных Армянской ССР. Зоол. сб. (Ереван), 1970, 15, с. 21-49.
3. Алоян М.Т. Нематоды грызунов Армении. Зоол. сб. ЗИН АН АрмССР. Мат-лы по изуч. фауны АрмССР, 1956, 2, с.125-170.
4. Даль С.К. Животный мир Армянской ССР. Позвоночные животные. Ереван. Изд-во АН ССР, 1954, Т.1, 414 с.
5. Россоломо О.Л. и др. Сони (Myoxidae) мировой фауны. М.: Изд. Московского ун-та, 2001, 229 с.
6. Саакян М.С. Фауна грызунов северо-восточной Армении. Тр. Арм. противочум. станции, 1964, 3, с.329-346.
7. Оганджян А.М. Материалы по фауне и зональному распределению гамазовых клещей в Армянской ССР. Фауна и экология вредных беспозвоночных животных Армянской ССР. Зоол. сб. (Ереван), 1970, 15, с.81-117.
8. Traub R., Rothschild M., Haddow J.F. The Rothschild collection of fleas. The Ceratophyllidae: key to the genera and host relationships. Cambridge: University Press, 1983, 288 p.

Հոդվածը տպագրության է նրաշխարհում խմբագրական կոլեգիայի անդամ, Կ.Գ.Պ. Հ.Գ.Գալստյանը: